ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

Դ" Անհաղթի փ" հ" 11, (+374 11) 518-844,Էլ" փոստ՝ qanaqer_zeytun@yerevan.am

31/154280-22

«ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Ա. ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻՆ
/ք. Երևան, Արաբկիր 21փ., 2 շենք, բն. 12/

Ծ Ա Ն Ու Ց Ու Մ
Պայմանագիրը միակողմանի (ամբողջությամբ) լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «Ամիրխանյան Շին» ՍՊԸ-ի միջև 22.07.2022թ. կնքված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/49-2 ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բակային տարածքների բարեկարգման աշխատանքները /այսուհետ՝ աշխատանք/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Ըստ պայմանագրի աշխատանքների վերջնաժամկետը սահմանված է եղել 18.12.2022թ.-ին, սակայն այդ ընթացքում ընկերության կողմից նույնիսկ չեն սկսվել նախատեսված աշխատանքները:

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավար Արտակ Հովակիմյանի կողմից Ձեզ է ուղարկվել 23.11.2022թ. թիվ 31/132832-22 գրությունն այն մասին, որ Երևանի քաղաքապետարանի և Ձեր ընկերության միջև կնքված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/49-2 գնման պայմանագրի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բակային տարածքների բարեկարգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա դիմաց:

Վարչական շրջանի կողմից պայամանագրի կատարման ընթացքի հետ կապված արձանագրվել է, որ վերոնշյալ աշխատանքները սկսված չեն և դրանք ժամանակին ավարտին հասցնելը ակնհայտ անհնար է:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև եղանակային պայմանների հետ կապված ռիսկի գործոնը, առաջարկվել է Ձեզ 3 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել սույն գրությանը:

Վերոնշյալ գրությունը Ձեր կողմից մնացել է անպատասխան, որից հետո Ձեզ են ուղարկվել վարչական շրջանի ղեկավարի 29.11.2022թ. թիվ 31/136613-22 և 07.12.2022թ. թիվ 31/141903-22 նույնաբովանդակ գրությունները, սակայն որևէ պաշտոնական պատասխան գրություն Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում չի ստացվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ «Պայմանագիրը լուծվում է միակողմանի, եթե՝ ա/ Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, բ/ Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ձեր կողմից խախտվել են պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը, ի դեմս Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի /Երևանի քաղաքապետի 14.11.2018թ. թիվ 3407-Ա որոշում/, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի ամբողջությամբ հրաժարվում է կնքված պայմանագրից:

Պայմանագրի մաս կազմող «Տուժանքի մասին համաձայնագրի» համաձայն՝ Կապալառուն պարտավոր է որակավորման ապահովման համար վճարել 431550 ՀՀ դրամ, իսկ պայմանագրի կատարման ապահովման համար՝ 287770 ՀՀ դրամ գումարի չափով տուժանքները, որից հետո համապատասխանաբար համարելով Երևանի քաղաքապետարանի և Ձեր ընկերության միջև կնքված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/49-2 գնման

պայմանագիրը լուծված՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Invalid signature

X

ԱՐՏԱԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Head of District
Signed by: HOVAKIMYAN ARTAK 1604790202

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՐՏԱԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

Կատարող՝ Գ. Կարապետյան
Հեռ. 011518890